ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024 թվականի մարտի 10-ից 16-ը

Բելգիայի Թագավորություն (ք. Բրյուսել) գործուղման արդյունքների մասին

1. Անունը ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝

Արամ Սայամյան - ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

Արմենակ Մելքոնյան - ՀՀ ՊԵԿ մաքսային հսկողության վարչության ապրանքների դասակարգման և սակագնային կարգավորման բաժնի գլխավոր մաքսային տեսուչ

2. Գործուղման վայրը և ժամկետները՝

Բելգիայի Թագավորություն, ք. Բրյուսել, մարտի 10-ից 16-ը

3. Հրավիրող կողմը՝

Համաշխարհային մաքսային կազմակերպութուն (ՀՄԿ)

4. Գործուղման նպատակը /աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/՝

ՀՄԿ ապրանքների նկարագրման և ծածկագրման ներդաշնակ համակարգի (ՆՀ) կոմիտեի հերթական՝ 73-րդ նստաշրջանի աշխատանքներին մասնակցություն, մասնավորապես՝ նստաշրջանի օրակարգում ընդգրկված մի շարք խնդրահարույց ապրանքների (հայելային մոնիտորներ, լուսային թերապիայի ապարատ, տարբեր սննդային արտադրատեսակներ (քաղցրավենիք, խմիչք, կերային հավելումներ) և այլն) դասակարգման, ինչպես նաև ՆՀ-ում և դրա պարզաբանումներում ախտորոշիչ ազդանյութերի, խելացի ապրանքների, բջջային աճեցմամբ մսի և դրանից պատրաստված մթերքների ու այլ ապրանքների դասակարգման հնարավոր փոփոխությունների քննարկումներին մասնակցություն, դիրքորոշման ներկայացում, քվեարկություն՝ հաշվի առնելով, որ ապրանքների դասակարգման ՆՀ

կոմիտեում ընդունված որոշումները դրանց ՀՄԿ չիրազեկման դեպքում պարտադիր են կիրառման ՀՀ-ում:

5. **Քննարկված թեմաները՝**

Օրակարգում ընդգրկված մի շարք ապրանքների դասակարգման հիմնահարցերի, ՆՀ պարզաբանումների ինչպես նաև ՆՀ և դրա պարզաբանումների ռազմավարական զարգացման հիմնահարցերի քննարկում:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

Օրակարգում ընդգրկված հարցերի, այդ թվում՝ ապրանքների դասակարգման քննարկումներին, ինչպես նաև քվեարկությանը մասնակցություն:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավոր-վածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Քվեարկության արդյունքում մի շարք ապրանքների վերաբերյալ դասակարգման որոշումների ընդունում, որոնք վերջնական կհաստատվեն հերթական՝ 74-րդ նստաշրջանում, ՆՀ ռազմավարական փոփոխությունների՝ այդ թվում պարզաբանումներում մի շարք փոփոխությունների շարունակական աշխատանքների շուրջ պայմանավորվածություն, որոնք կոչված են հնարավորինս համապատասխանեցնել ՆՀ-ն առևտրաշրջանառության միտումներին, նոր ստեղծվող ապրանքների արտադրական գործընթացների պահանջներին և պարզեցնելու են ՆՀ օգտագործումը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

ՆՀ կոմիտեի 73-րդ նստաշրջանում ընդունված որոշումներն անմիջական անդրադառնալու են ՆՀ, ԱՊՀ ԱՏԳ ԱԱ և այնուհետ՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ-ի փոփոխության և կիրառման տեսանկյունից՝ հաշվի առնելով, որ ՆՀ-ը հանդիսանում է դրանց իրավական սկզբնաղբյուրը: ՆՀ կոմիտեում ընդունված որոշումները ենթակա են կիրառման ՆՀ պայմանավորվող կողմերի՝ այդ թվում ՀՀ-ում, ուստի ՆՀ կոմիտեի նստաշրջանների աշխատանքներին ՀՀ

մասնակցությունը շատ կարևոր է՝ հաշվի առնելով, որ ՆՀ կոմիտեում են, ընդհանուր առմամբ, ձևավորվում ապրանքների դասակարգման մոտեցումներն ու սկզբունքները, որոնք հետագայում տեղ են գտնում արդեն ազգային անվանացանկերում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

Արամ Սայամյան՝

Արմենակ Մելքոնյան՝

18.03.2024թ.